

## ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 20—28 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում էին գտնվում Արգենտինայի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամներ պրն. Ժոզե Ռագուբյանը և դոկտոր Անդրանիկ Արսլանյանը՝ գլխավորությամբ թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիայանի:

Այս առիթով նրանց ընկերակցում էր Սան Պաուլոյի ազգայիններից պրն. Հարություն Սանոսյանը:

Մարտի 23-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանի ընդունարանում Մայր Աթոռի հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոսը և զրույց ունեցավ նրանց հետ: Զրույցի ընթացքում շոշափվեցին Արգենտինայի հայոց թեմին վերաբերող եկեղեցա-վարչական մի շարք հարցեր: Զրույցին ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը:

Հետևյալ օրը, մարտի 24-ին, առավոտյան ժամը 11-ին, Հարավային Ամերիկայից ժամանած հյուրերը Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսասրահում ներկա եղան Մայր Աթոռի միաբան հինգ երիտասարդ սարկավագների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությանը:

Մարտի 27-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնի առթիվ Էջմիածնի Մայր տաճարում մատուցված ս. պատարագի հանդիսավոր արարողությանը ներկա գտնվեցին արգենտինահայ հյուրերը:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ, որին ներկա եղան նաև Մայր Աթոռի հարգարժան հյուրերը:

Մայր Աթոռում գտնվելու օրերին հյուրերը ծանոթացան Մայրավանքի շրջափակում գտնվող կառույցներին, եղան «Ալեք և Մարի Մանուկյան» նորակառույց գանձատանը, այցելեցին Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ուխտագնացություն կատարեցին դեպի Ս. Գեղարդ վանք, եղան Սարդարապատում, Սևանում, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, դիտեցին «Արա Գեղեցիկ» և «Դիմակահանդես» թատերապարերը, այցելեցին Երևանի պատկերասրահ և այլ տեսարժան վայրեր:

Մարտի 28-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռի հյուրերը Վեհարանում հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և շնորհակալ զգացումներով ու լավագույն տպավորություններով մեկնեցին Ս. Էջմիածնից: